ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ /1-ին/

<<ՄՎ ՇԻՆ>> ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Արին բնակավայրի վարչական տարածքում գտնվող Ազիզբեկովի բազալտների հանքավայրի հանքարդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման վերաբերյալ հանրային քննարկումներ /1-ին քննարկում/:

2024թ. օգոստոսի 12-ին ժամը 12:00-ին, ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Արին բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ <<ՄՎ ՇԻՆ>> ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Արին բնակավայրի վարչական տարածքում գտնվող Ազիզբեկովի բազալտների հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման վերաբերյալ հանրային քննարկումներ /1-ին քննարկում/:

Հանրային քննարկումներին մասնակցում էին ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Արին բնակավայրի վարչական ղեկավար՝ Մանվել Ավետիսյանը, ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի համայնքապետարանի քաղաքաշինության բաժնի պետ Սամվել Իխտիարյանը և նույն բաժնի գլխավոր ճարտարապետ Ռոման Մկրտչյանը, առաջատար մասնագետ Ադամ Ավագյանը, ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի համայնքապետարանի գյուղատնտեսության և բնապահպանության գլխավոր մասնագետ Շմավոն Ազատյանը, <<ՄՎ ՇԻՆ>> ՍՊԸ-ի տնօրեն Մ. Շամլյանը, համայնքի և բնակավայրի բնակիչներ:

Ելույթ ունեցան

ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Արին բնակավայրի վարչական ղեկավար՝ Մանվել Ավետիսյանը, նշեց, որ համայնքում իրականացնում են 1-ին հանրային քննարկումները: Համայնքը պատշաճ ծանուցված է, ամեն ինչ նորմայի սահմաններում է, մենք շահագրգռված ենք, որ իրականացնեն նման գործունեություններ, որ որոշակի ընտանիքներ աշխատեն, բարելավվի համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը:

Ելույթ ունեցան նաև ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի համայնքապետարանի քաղաքաշինության բաժնի պետ Սամվել Իխտիարյանը և նույն բաժնի գլխավոր ճարտարապետ Ռոման Մկրտչյանը, առաջատար մասնագետ Ադամ Ավագյանը, ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի համայնքապետարանի գյուղատնտեսության և բնապահպանության գլխավոր մասնագետ Շմավոն Ազատյանը, ովքեր ևս կարևորեցին հանքարդյունահանման աշխատանքների իրականացումը համայնքում և միաձայն ողջունեցին և խնդրեցին, որ աշխատողները լինեն ազդակիր բնակավայրի

<<ՄՎ ՇԻՆ>> ՍՊԸ-ի տնօրեն Մ. Շամլյանը ներկայացրեց ՀՀ օրենսդրությունը, որ համաձայն <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի հանքարդյունահանման աշխատանքները ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության 2 հանրային քննարկումների իրականացմամբ, ներկայացրեց իրենց մտադրությունները:

Նշեց, որ Ազիզբեկովի բազալտների հանքավայրից հայցվող տարածքը գտնվում է Վայք քաղաքից 4-5կմ հյուսիս-արևմուտք և վերջինիս հետ կապված է գրունտային և ասֆալտապատ ճանապարհով:

Հանքավայրի հաշվեկշռային պաշարները հաստատվել են ՀԽՍՀ ՊՏՀ-ի 10.01.1967 թվականի N 151 արձանագրությամբ, ըստ A+B+C_1 կարգերով 2321,1 հազար $մ^3$ քանակով, այդ թվում՝ A կարգով -215. 5, B կարգով – 603,4հազար $մ^3$, C_1 կարգով – 1502 2հազար $մ^3$: Բլոկների ելքը 26. 6%:

Հումքը նախատեսված է շենքերի հիմքերի և ցոկոլային հարկերի համար: Նախատեսվելիք աշխատանքներն իրականացվելու են ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների համապատասխան:

Ընկերությունն իր պատրաստակամությունն է հայտնում պարբերաբար հանդիպելու համայնքի ղեկավարության հետ, քննարկելու անհրաժեշտ օգնության ծրագրերը և համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարել համայնքի բյուջե:

Ելույթ ունեցան համայնքի և բնակավայրի բնակիչներ, ովքեր միաձայն ողջունեցին նախատեսվող գործունեությանը:

Ամփոփելով հանրային քննարկման արդյունքները՝ մասնակիցները որոշեցին հավանություն տալ <<ՄՎ ՇԻՆ>> ՍՊԸ կողմից ներկայացված ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Արին բնակավայրի վարչական տարածքում գտնվող Ազիզբեկովի բազալտների հանքավայրի օգտակար հանածոյի հանքարդյունահանման աշխատանքներին:

Կից ներկայացվում է մասնակիցների ցանկը՝ 1 թերթ:

Քննարկումների պատասխանատու և վարող՝ ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի համայնքապետարանի քաղաքաշինության բաժնի պետ Սամվել Իխտիարյան

Ձեռնարկող՝ <<ՄՎ ՇԻՆ>> ՍՊԸ տնօրեն Մինաս Շամլյան